


4231



3-4+[331.4(43)]

L-23

ԲԵՐԴԱ ԼԱՍԿ

20 OCT 2009
28 JUN 2005

ԱՀ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ
ՊՐՈԼԵՏԱՐՈՒՀԻՄՆԵՐԸ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲՈՆՎՈՐՈՒՀԻՄՆԵՐԻ ԿՑԱՆՔԻՑ

14323-52

Թուրքմ. Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

30 APR 2013

4231

Ն. Ա. Խ. Ա. Բ. Ա. Ն

Յերդա Լասկը զերմանական բանվոր դասակարգի
լին գրազերից է : Նրա պատմվածքների թեման Գեր-
մանիայի բանվոր դասակարգի կյանքն է ու պայքարը :

Եր յերկերով Բ. Լասկը յերկան է հանում այն սար-
սափելի կեղեցման պայմանները, վոր ստեղծել է կապի-
տալիզմի բանվոր դասակարգի համար : Բ. Լասկի յեր-
կերում մեծ տեղ է գրավում բանվորութիւնոց դրու-
րյունը կապիտալիզմի պայմաններում : Նա նկարագրում
է Գերմանիայի իրավագուրկ, սովորակ զավակների հոգ-
ուով ծանրաբեռնված, գործազրկության մշտական սար-
սափի տակ ապրող պրոլետարութիների կյանքի անքա-
փակցելի խավարը :

Բ. Լասկը ցուցաբերում է կանաց հեղափոխական
գարքոները, յերք նրանի կարիքից ստեղծ, համոզվելով
իրենց դասակարգային քշնամիների դեմ անհաջո պայ-
քար մղելու անհրաժեշտության մեջ, մտնում են մար-
տիկների վազմակերպված ջոկատները՝ պայքարելու
հանուն բանվոր դասակարգի ազատագրության կապի-
տալիստական շահագործութից, յերք նրանի իրենց ա-
մուսինների հետ միասին մտնում են գործադուլային
պահակախմբերի ու բանվորական ինքնապաշտպանու-
թյան ջոկատները, ըմբռնելով, վար կրտսենիստների դե-
կույտությունը կապիտալիզմի դեմ մդմող դասակար-
գային անհաջո պայքարի ուղին այն միակ ուղին է, վոր

Պետիքառի ուղարկու
Գրադիւն 6454 (բ)
Պատ. № 3155
Տիր. 4000

աղասագրում և անելանելի թշրիմունից, քաղցից
և իրավագրկությունից :

Բ. Լասկի պատմվածքները գլխավորապես նվիրված
են աշխատավոր կանաց այդ պայքարին։ Նրան բաց
հանոր և այդ կյանքը և այդ պայքարը։ Բ. Լասկին ին-
ձանոր գործեր և աշխատավոր կանոնադրության մեջ։ Նա ակտիվ մասնակցել է մի բանի գոր-
ծադրությունից։

Բ. Լասկը պրոլետարիատի բանակն և յեկել ուրիշ
դասակարգից։ Նա ծնվել է գործարանատիրոջ ընտանի-
քում։ Նա մեզ մոտ յեկել է բուրժուական գրականու-
թում։ Նա մեզ մոտ յեկել է բուրժուացի շնոր-
քյունից՝ յերբ պատերազմի և հեղափոխության շնոր-
քի հեղաշրջում և առաջացել նրա աշխարհայացքի մեջ։
Պատերազմի ժամանակ նա դարձել է անտիմիլիտարիստ։
Քաղաքական ինքնորոշման համար կատարած իր գորո-
նումների մեջ 1921 թ. նա ընկերում է անարխիստների
բանակը։ բայց այնուհետ նա յերկար չի մնում։ 1923 թ.
թերդա Լասկը մտնում է կոմունիստական կուսակցու-
թյան շարքերը և դառնում ակտիվ մարտիկ պրոլետա-
կան հեղափոխության հաղթանակի համար մղվող պայ-
քարում։

ԲԱՆՎՈՐՈՒՀԻ ՎԱՆԴԱՆ

Մանարանում ամեն ինչ պատաճ և բամբակի քուլա-
մերի մանրիկ, գորշսպիտակավուն ձյունով։ Թվում ե,
թե փոշէծածկ պատուհաններից ներս թափանցող արհ-
վի ճառագայթներից յուղի և թաց բամբակի հոտ և գա-
լիս։

Լույսը հիվանդուս և այստեղ, իսկ արեգը՝ դը-
գույն։ Աղմկոտ մեքենաների շուրջը պտտում են գու-
նատ կանայք և պատանիները՝ իսկական ուրվականներ։
Խլացուցիչ վորոտով դղբղում են մանածային դազդահ-
ները։ Բանվորուհիների կերպարանքը նրանց մեջ թվում
է կակուղ և գուսկրաղուրկ։ Ամբողջ դահլիճը հազար կո-
ղանի յերկաթյա մի կմախք և, կազմված ճախարակնե-
րի անշարժ շրջանակներից։

Այստեղ և այնտեղ յերեսում են մարդկային մարմին-
ներ, իսկ նրանց գլխավերիկը՝ սպիտակ փաթիլների
ամպեր։

Ճախարակներ մատուցող կանանց և յերեխաների
աղերն ու հագուստը ծածկված են սպիտակ փաթիլնե-
րով։ Փոքրիկ ծուռվոտ ծմբիլը, վորի տարիքը արտաքին
տեսքով տասներկուսից ավել չե, թափառում և պող-
պատե կմախքների մեջ, իր հետեւց քարշ տալով դա-
տարկ ճախարակների կողավը։ Նա անձկությամբ դի-
տում և գուան առաջ կախած կլոր ժամացույցին։ Դեռևս
ժամի յերկուսն ե։ Բանվորները կոացած քայլում են

վաղող սելֆակտորների յետեից : Նրանց արագաշարժ ,
հանգստի անտեղյակ ձեռները վախեցած թռչունների
նման այս կողմ , այն կողմ են տարվում յերկաթե շրջա-
նակների մեջ և կապում կտրված թերերը :

Բանվորուհի Վանդա Վիճեվսկայան գնահատելի
մանածագործ է : Ահա արդեն տասնըհինգ տարի յե , ինչ
նա աշխատում է տեքստիլ արդյունաբերության մեջ :
Վանդան առողջ և ուժեղ կին է : Նա ունի բերնի սուր ,
ամփոփ գծեր : Սովորաբար նա քիչ է խոսում , բայց յերբ
անհրաժեշտ է պաշտպանել ընկերոջ , նա կարողանում
է գտնել ծանրակշխո , համոզիչ խոսքեր :

Վանդային սիրում են բանվորուհիները : Առանձ-
նապես նրան նվիրված են ճախարակ մատուցող տղանե-
րը : Ծագմամբ լէ , նա Պրուսիայից տեղափոխվելով
արևմտաք , դեռ ամբողջովին չի ընտելացել նոր վայ-
րին : Նրա մայրական դորովալից աչքերում յերբեմն
բոնկում և թափիծը :

Շահել վոռնում է : Պայծառանում է Վանդայի դեմ-
քը : Նա թաշկինակը հանգուցում է ծնոտի տակ , հագ-
նում է շատ լիանալուց մաշված ու փայտող սե բաձկոնր
և շատերից առաջ հանում դռանը : Ճանապարհի մի
ժամ նա անցնում է ընկերուհիների հետ , ապա արա-
գությամբ թերվում դեսի աջ :

— Այդ ո՞ւր ես շտապում , — Հարցնում է դեղնածամ
երեսան , վորը միայն յերկու որ է , ինչ աշխատում է
գործարանում : — Յերեկի մարդու վաղուց քեզ և ապա-
սում :

— Ցես ամուսին չնւնեմ , — պատասխանում է Վան-
դան ծիծաղելով և հեռանում փողոցի թթության մեջ :

— Նա հպարտորեն և անկախ լինելու պացումով շըտ-

կում և մեջքը : Ավելի լավ և ապրել մենակ յերեխաների
հետ : Ամուսնության առաջին տարիներն ուրիշ ելին .
այն ժամանակ իրեն և ամուսնուն կապում եր սերը :
Այն ժամանակ ամուսինը կանոնավոր մարդ եր , չեր խը-
մում և անառակությամբ չեր զբաղվում : Իսկ հետո ...
կանայք , ողի , կոպտություն , հայոյանքներ : Նույնիսկ
կարիք եր լինում փողը թագցնել նրանից :

Իսկ յերբ մի որ նա տուն յեկալ այն հոնդարացի
կոնջ հետ ... Վանդային թվում է , թե նա կը կին տես-
նում է նրանց իր առաջ : Նրանք կանգնած եյին փոքրիկ
խոհանոցում : Կինը թուի մարմին ունի , հարթ սե մա-
զեր , ծույլ հաստ շրթունքներ : Նրա աչքերը փայլում են
կոճակների պես և նայում հանգիստ անամոթությամբ :
Ամուսինը ցանկանում եր այդ կոնջ տեղավորել իրենց
տանը , իսկ Վանդան պետք է հոգ տաներ նրա համար :

— Վոչ , — Հայտարարեց այն ժամանակ Վանդան :
Կորիք , հետացիք քո սիրուհու հետ միասին : Դու մեզ
պետք չես :

Նրանք հետացան : Ամուսինը յերկար ժամանակ նը-
րան հանգիստ չեր տալիս և ժամանակ առ ժամանակ
ժիանալով նրան , ճանձրույթ եր պատճառում : Սակայն
նա ամեն անգամ նրան վոնդում եր : Նա այլիս թույլ
ժի առ իր մոտ զալու վոչ մի աղամարդու : Հերիք է :

Շատ ամիսներ են անցել արդեն այն որից , յերբ ա-
մուսինը վերջին անգամ յեկել եր իր մոտ : Նրա աչքերը ,
վոր առաջ այնքան պարզ եյին , այժմ լցված են արյան
կարմիր յերակներով : Նրանք բորբոքված են ատելու-
թյամբ : Հեռանալուց առաջ կանգնելով գոան չեմքին ,
նա նորից յետ գարձավ և նայեց չարամիտ հայացքով :
Ուր հայրացից Վանդայի մեջքով սասուր հոսանք անցավ :

Հենց այժմ ել յերեկոները, քննիլիս նա հաճախ հիշում է այդ հայացքը և նրա վերջին խոսքերը՝ «Յես գեռ ցույց կտամ քեզ ել, քո զավակներին ել»:

— Մամա—մանկական յերկու ուժեղ թեփեր փաթաթվում են վանդայի վզով:

— Կատյա, կատերինա—վանդան աղջկան ամուր սեղմում և իրեն և նրա հետ միասին սանդուղքով բարձրանում խոհանոց։ Վառարանի մոտ կանգնած և տառ յերեք տարեկան մեծ աղջիկը՝ Աննան և խառնում և լուր ձաշը։

— Ինչ համեղ և այսոր ձաշը, մամա։ Լորածաշ, այն ել ձարպով։ Վանդան ժպիտը վեմքին մատով սպառնում և բարձրահասակ աղջկան՝ թիկնեղ և ճկուն Աննային։ Աննան նրա հպարտությունն և։

Լորածաշ՝ մի կտոր քարթու սև հացով—ահա նրանց ամրող ձաշը։ Փոքրը աչքի տակով նայում և գատարկ հացամանին։ Մայրն արագությամբ յերեխային մոտեցնում իր բաժնի կեսը։ Աղջիկը պատասխանում և գոհունակ հայացքով։ Ճաշից հետո վանդան կարկատում և յերեխաների հագուստը և լվացք թրջում։ Մթնչաղը դանդաղորեն սահում և լուսամուտից և լցնում սենյակը…

— Թող աշխատանքը, մամա, յեկ մեզ մոտ։

Վանդան նստում և յերեխաների մեջտեղ, հնամաշ, ջարդված բազկաթոոի վրա։ Աղջիկները քնքորեն գրեցում են նրան։ Նրանք բալորն ասես կազմում են մի բնդհանուր մարմին։

— Մամա, մեզ մի բան պատմիր անցյալից։ Պատմիր քո ծննդավայրի մասին…

Վանդայի աչքերը հառած են յերեկոյի մարող վեր-

ջալույսին։ Նրանց մեջ թափառում են հիշողությունները։

— Այդ մի չքնաղ, բայց զարհուրելի պատմություն և…

— Պատմիր, պատմիր, մամա—ահճամբեր բացականչում են աղջիկները։

— Այն յերկրում լինուեր չկան, ինչպես այստեղ։ Մի հսկայական հարթավայր և ալիքաձև մակերեսով։ Զմռան ամիսներին ձյունը հասնում և մինչև գոտկատեղը։ Իմ պապն ու տատիկն ասլրում ելին հեռավոր խուլ անկյունում։ Մեկ անգամ կիրակի որբ—բանը պատահեց ձմեռվա ամենացուրտ որերին—տատիկս սահնակ նստած մենակ գնում և զաշով։ Նա իր հետ վերցնում և միայն յերեխային՝ տաք փաթաթած մի քանի վիրմակով։

Գյուղից բավական հեռանալով, նա տեսնում է, վոր ինչ վոր մի մութ բան մոտենում և իրեն։ Դրանք չներ են լինում, և վոչ թե մեկը, յերկուսը, այլ չների մի ամրող վոհմակ, վորոնք լեզուները հանած և ժանիքները ցցած, հարձակվում են սահնակի վրա։ Չին ծառս և լինում, գողում և և կատաղածի նման սկսում վազել։ Այստեղ տատը հասկանում և վոր գրանք գայլեր են։ Նրանք արգեն հասնում են սահնակին, վրա պըրծում ծիռ վրա և բղիկ բղիկ սմում։ Տառս սկսում և հարվածել նրանց մարակով։ Ուրիշ զենք նա չի ունենում։ Գայլերից մինը ցատկում և սահնակի վրա, ըրունում և յերեխային և փախչում։ Տառս ել մարակը ձեռքին թռչում և նրա հետեւից։ Նա հասնում և գայլին և մարակը քաշում նրա մարմնին։ Գայլը գցում և յերեխային… Այդ րոպեյին լավում ե զանդակների ձայնը, դրանք կալվածատերերի սահնակներ են լինում, պարոն-

ները մեջը, վորոնք գնում են վորսի: Հրացանավոր վորություններն ընկնում են գայլերի վոհմակի հետեւից: Տառս վերցնում և յերեխային և փաթաթում: Նա վնասված չէ լինում: Տղամարդիկ հավաքվում են տատիս շուրջը և նայում նրան զարմանքով:

— Մորաքուր այդ մի մարտկո՞վ և յիր գնացել զայլերի վրա:

— Հա, բա՞ , նրանք յերեխան փախցրեցին ինձանից, չե՞—պատասխանում և տատիկս :

Աղջիկները լուռ են, չունչները բոնած: Վերջապես փոքրն ասում ե.

— Մամա, յեթե յես այն յերեխան լինելի, վոր գայլերը տարան, դու յել նույնպես կվարվեյիր:

Հանկարծ դուռը բարձր ծեծում են: Յերեքն ել վեր են թուզում: Նրանք վոսնաձայն չեյին լսել:

— Գայլերն են,—կամաց ասում և Անման և ծիծաւզում վախը փախցնելու համար:

Դամն չեմքին կանգնում և տերտերը, յերկար սե փարաջան հագին: Նրա կարմիր տափակ գեմքի վրա մանր սուր աչերը կարծես տնտղելով նայում են սենյակի չորս կողմքը:

— Եես ընդհատեցի՞ ձեր յերեկոյան աղոթքը, տիկին Վիշնեվսկայա:

— Վոչ, ձերդ արժանապատվություն: Մենք այնքան հաճախ չենք աղօթում: Դրա համար ել մեր մեղքերը շատ են: Հաճեցեք նստել, ձերդ աժանապատվություն:

Տերտերը նստում է, ճարպոս գեմքին քաղցր ժպիտ տալով: Սկ փարաջան լայն ծալքերով աթոռից տա-

րածվում և մինչեւ գետին: Կարծես մի ահոելի չղջիկ թուավ ու նստեց սենյակի մեջտեղը և խժուում և վերջաւույթի վերջին չողերը: Վանդայի քիչ պեղենուս դեմքը սպիտակին և տալիս մթնչաղից:

— Ինչ լավ աղջիկներ ունեք տիկին Վիշնեվսկայա: Իսկ դուք աշխատում եք մահածագործարանո՞ւմ:

— Այո, ձերդ արժանապատվություն:

— Իսկ ի՞նչ են անում աղջիկները, յերբ դուք գործարանումն եք լինում:

— Առավոտները նրանք գողրոց են գնում: Ճաշից հետո նրանք տնտեսությամբ են զբաղվում, դասեր են պատրաստում և մի քիչ ել խաղում են:

— Շատ լավ, մաքուր աղջիկներ են: Իսկ նրանք փո՞քեղ են խաղում:

— Փողոցում, ձերդ արժանապատվություն:

— Այսպիս . . . Փողոցում . . . Այդ հետաքրքրական եւ Սկ փարաջակորն ինչ վոր բան գրի յե առնում իր ծոցատերում: Նրա լայն բերանն արտահայտում և քաղցր և նենգամիտ ժպիտ:

Վանդան նայում և տերտերի վրա մեծ, զարմացական աչքերով: Այդ ի՞նչ և նշանակում: Արդյոք նա չի մտածում աղջկանն ուղարկել հանգստանալու: Գոնե նրանք մեկ անգամ իրենց կյանքում ամառանոց գնան:

— Զեր բնակարանը միայն այս խոհանո՞ցն է, սիրելիս:

— Մի փոքրիկ սենյակ ել ունեմ: Այնտեղ զրված և մի մահճակալ:

Վանդան հոժարությամբ բացում և խոհանոցի պատին կից փոքրիկ, նեղ, համարյա լույսից զուրկ սենյակի դուռը: Սկ փարաջան լողում և սենյակում:

— Բնակարանը մի քիչ նեղ և յերեք հոգու համար :
— Մեծ բնակարանն, իջարկե, ավելի լավ կլինիք,
ձերդ արժանապատվություն : Բայց, ինչպես տեսնում
եք, յերեխաներն, այնուամենայնիվ, առողջ են :

— Ինչո՞ւ ձեր աղջիկներին յեկեղեցի չեք ուղար-
կում, սիրելիս : Ինձ ասացին, վոր նրանք վազուց ե,
ինչ այստեղ չեն յերեխացել :

Տերտերի լայն ճակատի վրա ուռչում են յերկո-
րարկացած կնճիռներ :

Մայրը նայում է այդ կնճիռներին, խորամանկ կեղ-
ծավոր բերնին և կմկմալով ասում է :

— Յես նրանց կուղարկեմ :

Սև փարաջավորը իջնում է սանդուխքով : Մութը
սողում և խոհանոցի պատերից : Մայրը և յերեխաները
պատկում են քնելու :

Վանդան յերկար չի կարողանում քնել : Ինչո՞ւ հան-
կարծ նա մի ծանրություն դդաց իր վրա : Սկզբում սև
փարաջավորը հարց ու փորձ եր անում բարեկամաբար
իսկ հետո... նա զգում է, վոր ինչ վոր վտանգ է սպառ-
նում իրեն : «Զզլելի կեղծավոր բերան—մտածում են ա-
մտքերը խառնվում են, ցրվում : Քունը հաղթում է նը-
րան :

* * *

Առավատյան, դորձարանի ձանապարհին նա ամ-
երս չի մտածում սև փարաջայի մասին : Նա ավելի
լուրջ հոգս ունի՝ զոլծից հեռացվելու միաբը : Ամեն
շաբաթ կրծատումներ են կատարվում ցեխերում : Այժմ
հերթը մանաբանինն է : Ճիշտ է, կանդան լավ բան-
գորուհի յէ և արգեն յերկու տարի յէ ինչ աշխա-

տում և այս գործաբանում՝ բայց նա վերահսկուեհու
հետ հաշտ չեն : Վանդան չի կարողանում զուր գալ և
սովոր : Ասենք ամենքն ել կորող են կը ճառաման յին-
թարկվել :

Դժբախտությունը չոքեց նաև Վանդայի գուանը :
Նա կրծատությունը հեռացվողների յերկրորդ խջրի համ:

Այժմ արգեն զործագուրկ է : Առաջին ամսին նա
զեռ կանոնավոր մուծեց բնակարանի վարձը, յերկրոր-
դին՝ միայն մեկ յերրորդը, իսկ յերբորդ ամսում
այլեւ բոլորովին փող չկար : Ոգուտ շունեցան վոչ
խնդրելը, վոչ հավաստիացումները, թե շուտով աշ-
խատանք կլուսնի :

Նա վարդեց բնակարանից : Այժմ սազբում է
փայտե անակներից մեկում : Վանդան գիտեր, ին-
չու եր նշանակում տպրել փայտե տնակներում :
Այսող վազուց ապրում եր իր քույրը՝ թոքախտավոր
այրի մի կին, չորս յերեխաներով : Դրանցից եմիւր,
վոր ամենամեծն եր, զործարանում ճափարակներ եր
պար ամենամեծն եր, զործարանում ճափարակներ եր
պար, իսկ մնացածները դեռ պետք և զպրոց հաճա-
խելին :

Դող եր անցնում վանդայի մարմնավ, յերբ հի-
շում եր, վոր ոկտօք և տեղափոխվել : Տնակներում իշ-
խում եր անհուսանելի թշվառությունը :

Բայց Վանդան չափազմնց ամուր վոդի ուներ և
նա չուսալիքեց : Յերեխաների սերը նրան ուժ եր
ներչնչում : Շատ չանցած, նրա աղքատիկ բնակարանը
գետնափոր անակների չարքում՝ փալելու չափ մաք-
րած, յերկու ծաղկամանով, տաշած սպիտակ սեղա-
նով ու գույնգույն սփառում՝ գուրեկան տեսք ընդու-
նեց և այնքան արտասովոր եր այդ խզնուկ, խոնավ
փայտաշն բալագանների մեջ :

Վաստ եր լինում անձը եւ վային յեղանակին : Այն
ժամանակ ջուրը վերելից յերեք տեղից հսուում եր
պատեր ով : Յերբ մահակտները մոտեցնում ելին
լուսամուտներին, այն ժամանակ անցքերից ներս Ելին
թափանցում տնձեռվի ջրերը և թափում քնածների
վրա : Ամբողջ գիշեր մինչեւ լույս կարիք եր լինում
մահակալները քաշել մի տեղից մյուսը, և առավոտ-
ան լուրջն արթնանում ելին դոզալով, մրսած ու
հոգնած :

Այսպէս անցավ յերկու ծանր ու խավար ամիս :
Վերջապէս վանդան աշխատանք դառվի : Հին Փիրմը
նրան կրկին ընդունեց, վորագհեակ նու ամենալով և
ժրաշան բանվորուհիներից մեկն եր :

Ամառը մոտենում եր : Յերկիսաները կարող Ելին
խաղալ լաց ողում : Նրանց աչքերի տակ սեղացած
ըծերը պակասեցին և որդած դեմքերը կլոր տեսը
ստացան : Քաղցի ամենավատթար ժամանակներն ան-
ցան, իսկ աղջիկները սերվում ելին դիմացկուն
ծնողներից, և այնքան հեշտ չելին հիվանդանա : Մեկ
տարի հետո Աննան պետք և ավարտեր դպրոցը : Նո
վազորոք հպարտանում եր նրանով, թե շուտով ինքը
յուրաքանչյուր ուրբաթ յերեկո տուն կրերի իր սո-
ցիկը և մայրն այլիս մենակ սոտիզած չն մինի կերտ-
կրելու յերեքին :

Մեկ որ ձաշից հետո դաշտաւմ, ուր կառուցված
ելին տնակները, յերեխաց մի ծանր ու կերպարանք
ծածանուղ փարախարով : Դա քահանա բորգուրման¹⁾
եր, վոր մի ժամանակ այսելեւ եր վանդացին : Նո

¹⁾ Բորգուրմ բառացի նշանակում և կրծող վորք :

բրտինքը սրբեց հաստակաւի կարմիր յերեսից և
վիճացրեց .

— Ահ, տեր Հիսուս, ինչքան հետու յին գնացել
այդ մեղավորները : Մարդ սոտիզաված և այդպիսի
ծանր զոհաբերություն էստարելու մանկակուն
հոգու վիրաւթյան համար :

Բորգուրմը համբաքայլ մոտեցավ անակներին :
Նա մի ակնթարթ կանգ առաջ, ճիշտն առած մենակ
չպետք եր գնալ այս հանցավոր խուժանների մոտ :
Նա կրկին հառաչեց, անհոգ ու ինքնահալան տեսք
ընդունեց և հանդարտ շարունակեց ձանազարհը :
Նրա առաջ մասին մի խղճուկ փայտե տնակների մի
ամբողջ թաղածաս, վոր սպատերազմի ժամանակ հապ-
ձելու կառուցված եր գերիների համար և ապա անցած
քաղաքին, վորովես ժամանակավոր բնակարաններ
չքավորների համար : Ժամանակավոր բնակարաններ,
վորուղ մարդկիկ ապրում ելին տարիներ շարունակ,
իսկ վոմանք այնաեղից կարսղանում ելին նորինիսկ
տեղափոխվել բորգուրմի անորինության տակ գտնը-
վող յերկնային բնակարանները :

Քահանան առողջանում եր յերկշարք տնակների
միջով : Հասարակական արտաքնոցներից զարշահո-
տություն եր փշում :

— Խսկապիս վոր մեր յերկիրը վշտի հովիտ և
կիսածայն արտասանեց նա :

— Բայց համենայն գեղս վոչ քեզ համար : Քա-
ժակդ հասացրել ես վերացրած խոզի նման և զեռ
րաց ես յինում :

Քահանան ցնցից : Մի անակի լուսամուտից դրու-
խը զորս եր հանել գողգված մազերով և բոցավառ աչ-
քերով մի ցնցոտիապատ յերիտասարդ :

— Յեթե դուք քիչ խմելիք զգվելի ողին, —կանդ չառնելով ասաց բորբուրմը, —դուք ավելի քիչ պիղձ մտքեր կարասհայտելիք:

— Այս, յեկեղեցական գինին, ի հարկե, ավելի լավին ե, —վրա բերեց կանացի մի սուր ձայն, —բայց այն ել դու մենակ ես հուզ տալիս:

— Զգվելի ճրիակեր, դու պետք ե կանգնելիք դորդարանում կոսի վառարանի սուած, —բացականչեց խճճված մազերով յերիտասարդը: Դա Յուզպան եր, վորին կացրել ելին «գրգուէ» անունը: Առաջ նու աշխատում եր գաղի գործարանում: Յերբ սուր կերպարանք ստացավ նրա թոքախտի առօցեար, նու զրկեց աշխատանքից և տեղափոխվեց այդ տնակներն արդեն յերկար ժամանակով:

Քահանան արագացրեց քայլերը: Նրա հետեկց լովեց բարձրագուն գրգուէ ծիծաղ:

Բորբուրմը մոտեցավ խաղացող յերեխաների բազմությանը: Յերեխաները վախեցած քաշվեցին այս ու այն կողմ: Նրանցից մի քանիսը գլուխ խոնարհեցին ձեվական հեղությամբ, մրտաները համառ արտահայտությամբ հեռացան մի կողմ: Քահանան հարցըրեց, թե վորն ե վանդա վիշնեվակայտի բնակարանը:

Տան առջև ընկած փոքրիկ հրովարկը մաքուր ալլած եր,՝ լաւամուռներում յերեվում եր ծաղկող խորդենի: Տնակի մոտ աթոռի վրա նստած ելին աղջիկները: Անհան սի բրդե գուլպա յեր գործում: Կատյան գասերն եր պատրաստում: Քահանան աչք չեր հեռացնում Անհայի փայլուն մազերից և նրա մասակ կրծքի բարձունքից: Նա աղջիկներին մի քանի մեղրա-

ծոր խոսք ասաց, չարջրեց, ին արդյոք նրանք հաճախում են ժամանացության, թե վոչ, դիտեց տնակը և արդեն պատրաստվում եր հետանալ, յերբ յեկալ վանդայի քույրը: Կրոնական դաստիարակություն ստացած ընկճված այրի կինը խոնարհաբար վողջունեց քահանային և հայոնեց, վոր ինքը քըռջ աշխատանքի ժամերին ինսամում և յերեխաներին:

Մանուկների խնամատարության կաթոլիկ ընկերության բյուրոյում զրուցում ելին հոգաբարձուչին, գալանի խորհրդականուհին և քահանա բորփուրմը: Գալանի խորհրդականուհին և քահանա զեկուցեց իր յերեկով Տնային յեկեղեցու քահանան զեկուցեց իր յերեկով այցելության մասին, և բարեկացու գալանի խորհրդականուհին ասաց.

— Բանվոր Վիշնեվսկին իրավացի յեր, յերբ չերցանիկանում յերեխաներին կեռչ մտու թողնել: Հնարացանիկանում յերեխաներին կեռչ մտու թողնել:

— Տերը հրաշքով մեզ ողջություն և ցուց առնեն: Նույնիսկ այլուրեման և որտաների մույլ ապառնությունիւնից այտափառական քահանան:

— Ինչողե՞ս այսուհետեւ գործն առաջ առնենք: Արդյոք այդ տնակները պարաբռ հող չե՞ն հանդիտ: Արդյոք այդ տնակներում միստիներուկան գործունելության համար: Զի՞ կարելի, արդյոք, ժամերգություն կաղմակերպել

այնտեղ, վորպեսզի մարդիկ վերագտանուն յեկեղեցու գիրկը և աղասովեն իրենց մեղքերից։ Արդյոք հՀաջող-վի՞ մեղ բերել աղջիկներին։

Թաղմանի իորհրդականուհին չուվեց բաղկաթոսի մեջ և հիացած արտահարությամբ լունելով նայեց բահանային։

— Մեղ վիճակիմած չե մեծ զործեր կատարելու այս քան մեղափոր ժամանակներում, — ասաց բորփուրմը, չիձելով Յուլիպի գեմքը։ — Նախաքրիստոսը ուժեղ և, իսկ անակների թաղամասն ամբողջովին բռնված և անհատվածության համաձարակով։ Մենք սկսոք ե իմաստուն լինենք, ինչպես ոճը, թե չե այս անփշալ տեղը կնատի մեր վկին։ Ամեն ինչ սկսոք ե կատարվի արագ և գաղտնի։ Վաւլի¹⁾ Դավակների լրադրերը վո-չինչ չպետք ե իմանան։

Հառաջելով նա մտածեց իր մասին։ «Ինչ զժվար ե զործ ունենալ այդ պճամուն կինարմատի հետ։ Նրա հետ միշտ պետք ե խոսել այնպես, ինչպես յե-կեցեցու բիմից»։

Ուրացումը քրիստոնյայի պարտականությունն ե, — կեղծավոր զթաշարժությամբ արտասանեց զաղոտ-նի խորհրդականուհին և աղոթելու ձեռով ձեռները ծա-ւեց, վորոնց վրա փայլում ելին բրիլիանտները։ — Մեղ վիճակված չե մեծ, փայլուն զործեր կա-տարելու մեր անհատված ժամանակներում և եզու-թյամբ կրկնեց նա իջեցներով զորմիո՛ խնամքով զանգուրած մաղերով։

¹⁾ Բորփուրմը նկատի ունի կոմունիստական մտ-մուլը։

« Բանվորուհի վանդա վիճնեվոկայան կուսցած աշ-խառում և իր մեղենայի առաջ։ Դժեռում են մտասո-ները։ Ծանր վորոտամ են մանածային մեղենաները։ Վանդայի ղեմքը պատել և քըսինքով։ Շիկահեր արել աղակե թեք տանիքի վրայից նայում ե, ինչպես մի զաման զիշտակեր թուչուն, վորն իր մաղիների մեջ ամուս սեղմել ե իր զոհը։ Բամբակի փաթթիլերը պարում են սղի մեջ և խռոտուտ տալով խցկում քիթն ու ականջները։ Քրանած, յուղոտած ձեռքերով բանվո-րուհները աշխատում են սրբել նրանց իրենց յերե-սից։

Վանդան մեղենայարար հետ ու առաջ և շարժվում մեղենայի աշխատանքի տաքսում։ Երբ ձեռքերը թրո-չում են անուրինակ արագությամբ։ Մոտենում է ծուռ-վոս Եմիլը ճախարակների սայլակով։ Վանդան թոփ և տալիս իրեն և մտածում։ «Ի՞նչ են անում այժմ իմ աղ-ջիկները։ Արդյոք նրանց վրա հակում ե քույր»։

— Մայրու այսոր ոտնն ե՝ հարցնում և վանդան։ Եմիլը գլուխը շարժում ե.

— Այսոր մայրիկն աշխատում է գյուղացու մոտ։ Բանվորական որը վերջացավ։ Վանդան զնում և տուն։ Գլուխը գեռես ծանր և զործարանի հեղձոցից սղից։ Դաշտերից զոլորչի յե բարձրանում։ Առվի ջը-րից փառհոս և զալիս։

Ինչո՞ւ կատայան չի վազում իրեն գիմալորելու։ Վանդան անհանգստություն և զգում և արագացնում և բալերը։

Երա անակի առաջ խռնվել և ամբոխը։ Իսկ ո՞ւր և յերեխաները։ Վանդայի սուր աչքերը վորոնում են։

Սիրուլ բարսիում և և դադարում : Շուտ, չուտ պիտք
և տեսնի նրանց : Հանկարծ վոտքերը ծանրանում են,
կարծես լցվում են կապարով : Վանդան լրում և ՚իր
ամբողջ կամքը և վազում : Ահա նա կոնգնած և անակի
առաջ :

Նրա յերեալուն պես ըուրը մեկն պապանձկում
են : Հետո սկսում են պատմել . ճամփ հետո, յերբ տանը
համարյա վոչ վոք չկար, տնակներին մոտեցավ ո՞ի
հարուստ, վակ ավտոմորիլ : Հանկարծ ձիչ լովեց՝
«ողնեցեք, մամա»—աղաղակուժ ելին յերեխաները :
Անկայն աշտամորիյն արդեն սուրում եր հանապար-
հով, բայց վոչ թե շեպի քաղաք, այլ հակառակ ուղ-
ղությամբ : Յերեխաներից մեկը հեծանիվով ընկած նր-
անց հետեւից : Բայց մեքենան անհայտացալ վոչու ամ-
պի մեջ :

— Յեթե այս ըուրը ոև վարաչափորի գործը ըր-
մինի՝ այն հաստաքամակ տերտերի, այն ժամանակ յես
պատրաստ եմ ընդմիշտ հրաժարվելու ողուց-սոսց
Յուղպղրդիչը :

Վանդայի գլխում մըրկի արագությամբ պտավուժ
ելին մտքեր և կերպարանքներ . այդ տերտերը, վոր
մէծ ջղջիկի նման նստել եր իր խոհանոցում, իսկ ամու-
սինը՝ սպանալից, չարամիտ հայացքով...

— Ո՞վ արեց այդ : Ո՞ւմ դիմես : Վոստիկանու-
թյունը :

— Նո հենց քեզ եր սպասում , —խայթիչ տոնով ա-
սաց Յուղպղը : — Նրանք բոլորն ել մի խմբի ալազակներ
են :

Վանդան գնաց գեպի քաղաք : Դրացի կանայք միա-
ցան նրան : Առաջին անկյունում նրանք հանդիպեցին
20

Վանդայի քրոջը : Նա սկսեց բարձր լաց լինել և վող-
բալ : Յերկու շաբաթ առաջ, յերբ ացելեց հաստ տեր-
բալ, նա զգաց, վոր մի չար գիտավորաւթյուն կա
ուրա մեջ : Աստվածապահին այդ կաթողիկունին գեռ մի
լավ բան չեր տեսել յեկեղեցուց : Մի անգամ միայն
լավ բան չեր տեսել յեկեղեցուց :

Վանդան քայլում եր լուռ, ամուր սղման և զող-
գոջուն շրթունքներով :

ԳԺվարություններով ու հոգսերի մեջ նա յերեխա-
ներ մեծացրեց, և ահա այժմ, յերբ նրանք արդեն նե-
տրուի պիտի զառնային իրենց մորը, հափշտակեցին իրե-
նից : Յերկրի վրա արգարություն չկա, իսկ ինչ պիտի
լինի յերկնքում :

Վերջապես հասան վաստիկանասում : Նրանք այս
դեպքը վոչ տարորինակ համարեցին, վոչ զարհուրելի :
Վորքան չատ եր վրդովում Վանդան, այնքան անտար-
բեր եր զառնում պաշտոնյան : Վերջ ի վերջո նա կոտ-
րաբ հրամայեց նրան լսել : Քննություն կիստարփի :
Հավանաբար յերեխաներին տարել և խնամատարական
շնկերությունը : Այդ միանգամայն բնական և, յեթե
ընկերությունը : Այդ միանգամայն բնական և, յեթե
մայրը զնում և աշխատանքի և յերեխաներին թողնում
և փայտե տնակում մենակ, ամեն տեսակ մարդկանց
չըջանում : Քիչ բաներ են պատահում մեր ժամանակ-
շրջանում : Ծնողները իրենք են մեղավոր ամեն բանի մեջ

Միանգամայն զլուխը կորցրած՝ Վանդան թափա-
ռում եր փողոցներում : Զդանի արգայր այն տերտե-
ռում եր փողոցներում :

Ի՞ն: Բայց վորտեղից իմանա նրա հասցեն: Քաղաքամ
այնքան սև փարաջավոր կա, ինչքան զորտ կա ձահի-
ձում: Նա նույնիսկ շգիտի նրա ազդանունը:

Արդեն մթնել եր: Զարդված, դլուխը տանջալից
աղբուկով լցված, Վանդան սայթաքելով դիմեց դեպի
եր ամայացած բնակարանը: Քույրը ցանկանում եր
սուրճ պատրաստել նրա համար, բայց Վանդան ինդրեց
մենակ թողնել իրեն: Նա վուշինչ չկերավ և վոչինչ
չխմեց: Շորիրը չհանած, նա հենվնց ջարդված լազ-
կաթոռին և վառվող աչքիրը հանեց մթության: Նրա
չեր չաջողվում պարզել նրանց: Կես դիշերի մոտ Վան-
դան պարզի նման դլորվեց և քունը տարավ: Տանջալից
քունը նրան սեղմում եր, ինչպես յերկաթե մի դործիք:
Յերազում նա ամրող ժամանակ քայլում եր անվեր-
յերկու կերպարանք, վորոնք հիշեցնում ելին իր յերե-
խաներին: Ամեն անկախ մոտ նա հույս ուներ հասնել
նրանց, բայց կես նրանց չմսուցած՝ յերեխաները
դործյալ յերկում ելին շատ հետու: Նա ուզում եր
վագել, բայց վոտները ծանրանում ելին և աեղից շեյին
շարժվում:

Դուռը ծեծեցին:

— Աննա, Կատյա:

Քույրն եր: Նա բերել եր սուրճ և հաց,

Վանդան զնաց զործարան: Նա վախենում եր, թե
կորիփի դործիք: Նրան այժմ առանձնազիս փող և
պետք: Վորոնումները եժան չեն նստի:
Ժամանակն առաջ չեր դնում դործարանում: Ջախա-
րակի ըրջանակներն ու յերկաթե կմախրները ժամանու-

կին բոնել ելին այնպիս ամուր, ինչպիս լանտի վան-
դակները:

Վերջապիս աշխատանքն ավարտվեց, և Վանդան
գնաց հետախուզության: Վոստիկանատանը շատ յեր-
կար արձանագրություն կազմեցին: Փորձեր արվեցին
կար արձանագրություն կազմեցին: Փորձեր արվեցին
գտնելու այն ավտոմոբիլը, վորի մեջ տարել ելին յե-
ղանելու, բայց ապարդյուն: Վանդան հարցըց, թե
ըեփաներին, բայց ապարդյուն: Վանդան հարցըց, թե
տեղեկացել են արդյոք անչափահաների հանձնաժո-
ղովոց: Վոչ, դեռևս չեն տեղեկացել: Վանդան չտա-
պեց այստեղ, բայց կոմիտեն արդեն փակ եր:

Մյուս որը Վանդան մի ժամ գործից շուտ ազատ-
վեց և կոմիտե հասավ ճիշտ այն բապելին, յերե աշխա-
վեց սպակաները ուստարասուվում ելին տուն գնալու: Նա
տակիցները ուստարասուվում ելին տուն գեմքով մի
ինդրեց սպակաները, սրաքիթ և գունատ գեմքով մի
կուղաց սպասելու և զբաղվելու իր գործով: Ահա Վեհնե-
կուղ սպասելու և զբաղվելու իր գործով: Ահա Վեհնե-
կուղ սպակաները գործազրուրկ Պավել Վիհնեվուկին
վըսկայալի գործը: Գործազրուրկ Պավել Վիհնեվուկին
կես տարի առաջ միջնորդություն և հարուցել, վոր իր
կես տարի առաջ միջնորդություն և հարուցել, վոր իր
աղջիկներ Աննան և Կատերինան հեռացվեն մորից և
սեղապորվեն վորբանցում, վորոհետեւ ինքը նրանց
պահել չի կարող, իսկ մայրը անառակ կին է:

Վանդան կատաղեց.

— Սրբկա, ստախոս, հարբեցող: Ուրեմն նա յի
տարել յերեխաներին . . .

— Վոչ, միանդամայն անվրչով առարկեց սուր-
յեթը: Հայրը միայն միջնորդություն և հարուցել:
Մենք դործը հանձնել ենք բնելու կաթողիկ բորե-
ական դործը հանձնել ենք բնելու կաթողիկ բորե-
ական ընկերության, վորը հաճախ մեզ ոգնում է
դործական ընկերության, վորը հաճախ մեզ ոգնում է
այդ դործում և հետաքրքրվում և նման գեղաքերով:
Վանդան հարցըց ընկերության մնունը և հասցեն:

— Դուք միաստաթղթեր ունեք ձեզ հետ:

Վոչ, Վանդան փաստաթղթեր չուներ :

— Այդ ժամանակ ընդհանրապես յես ձեզ վոչինչ չպետք է հաղորդելի : Վաղը յեկեք և հետներդ բերեք ձեր փաստաթղթերը : Յես առայժմ տեղեկանքներ եմ հավաքում, թե արդյոք իրավունք ունեմ հայտնելու ձեզ ընկերության անունը : Այդ ընկերությունը բարփոք և համարում աշխատել գաղտնի :

— Դուք ի՞նչ իրավունք ունեք : Ձե, վոր դուք իմ յերեխաներին... դուք նրանց դողացել եք, — Վանդան այնքան բարձր գոռաց, վոր ինքը վախեցավ իր ձայնից : Նա բարձրացրեց աթոռը և չուրտեց հատակին : Հեծկրոպալով նա մոռեցավ զան :

— Հանգստացեք, տիկին Վիճնեվսկայա, — ասաց սուրբիթը, — և վաղը յեկեք : Ասենք չե, վաղը յեկեց հեղական առն և, և մենք չենք աշխատում ուրեմն՝ վաղը չե մյուս որ :

Վանդան դանդաղ քայլերով դիմեց դեպի առն, նա իրեն կատարելապես ջարդված եր զլում : Սիրալ պատրովում եր ցալից : Գլխում թափառում ելին հատ ու կտոր մտքեր : Ո՞ւր են նրանք... ի՞նչ է կատարվում նրանց հետ... ի՞նչ անել, ո՞ւր գնալ... Ամեն ուղղ նրանից խույս են տալիս, փարզես աներես մուրացկանից :

Նրա հետ այնպես են վարդում, կարծես նա մի հանցանք է զործել... Վանդան հիշում եթե ինչպես մի տարի առաջ գործարանատիրոջ կինը կորցրել եր իր մահացելը : Այն ժամանակ վորքի հանեցին ամրող վոստիկանությունը և գողին բոնեցին սահմանի վրա : Իսկ աջմանք : Այժմ հարցը չե վերաբերում մեռած իրերին, և վոչ չի ցանկանում

նույնիսկ մատը մատին տալ : Վանդան ամբողջ եյությանը ցնցում ե կատաղի զայրութից :

Վերջապես Վանդան հասավ տնակիներին : Դումն առաջնատած և սե Յուղպլը : Այսոր նա զգաստ է :

— Միշտ ել այլպես և լինում... — Հազարով ասաց Յուղպլը : Իշխանության ապականված սանդուղքի վեհականի վրա կանգնածներից մեկը դլուխտ կը կոխուի իր կոշիկներով և այլ աշազին : Կոշիկներով այսպիսին էականիցին մեջ : այնքան կհարվածի, մինչև վոր քեզ ինկղմի ցիկի մեջ :

Այնուհետև բարձրանալն այլեւ անմտություն կլինի : Այնուհետև բարձրանալն այլեւ անմտություն կլինի :

Վանդան կանգ է առնում և նրա վրա հառում իր մեծ, անշարժ աշխերը : Նա կարծես առաջին անգամ և ծիծակում նրա զիմքը : Հարցեցող Յուղպի վրա միշտ ծիծակում ելին : Վոչ վոք նրա վրա ուշադրություն չեր գարձնում : Բայց մի ժամանակ նա աղնիվ բանվոր եր, ամբողջ որը չարչարվում եր և չեր խմում : Վանդայի մեջքով զազ եր անցնում : Նրա զիտակցություն խոր գումար արթնանում է յերկյուղը իր անձի համար : Այդպիս ե լինում, ձիշտ այլպես : Նա կանգնած է ինչորեւ անկված մի փայտ : Այլպիս կարող է կատարվել նուհանությունը չե վոր աշխարհում : արդարություն չկա : Նրա հետ... չե վոր աշխարհում արդարություն չկա : Արարդ գիտե, վոր ինքը անմեղ և բայց շնչիտն, թե հանուն ինչի յե տանջվում :

— Ինչու յես նրան վախեցնում, Յուղպի, — լավում է անակի պատուհանից : Լոեք, թե ինչ եմ առօդ, վիշնեվսկայայա : Յերկու տարի առաջ կորավ Մյուլերի վիշնեվսկայայա : Այդպի յերեխաներին տանում են Դյուսելդորֆ՝ ու Վինցելի յերեխաներին տանում են Դյուսելդորֆ :

բոհում են այդ սեազգիստ զիշատիչները։ Գնացեք
Դյուսուելուրֆ և ինքներդ ստուգեցեք։ Այստեղ նրանք
ձեզ միայն հիմարի պես ման կածեն։

Մյուս որը Վանդան զնաց Դյուսսելուրֆ։ Արեւու
պայծառ որ եր՝ ինութեները փակ եյին։ Հարուստ
թաղամասի փողոցներում զրոսնում եյին զարդարված
մարզիկ։ Վանդան կայարանից ձանապարհ ընկավ նախ
կոմս Աղոլֆի փողոցով, ապա Արքայական ծառուղի-
յով, վորը համարում են ամեն գեղեցիկ փողոցն ամ-
մող Գերմանիայում։ Մի նեղ առվակ եր՝ զարդարված
րարձր յերկշարք ծառերով, քայլողների համար լայն
ձանապարհներ ծառերի ստվերում, իսկ որինակերի
սալահատակի մյուս կողման սքանչելի տներ-իսկանութ-
ներով, վորոնք գաճառում են արդ ու զարդի առարկա-
զարու իր ազգիկների հետ միասին։ Նա ցանկանում
էր ցույց տալ նրանց գեղեցիկ փողոցները և չոենս գե-
րաց համբարդությունն ամեն անզամ հետաձգվում
էր—փող չկար։ Իսկ այժմ . . . Վանդան հազիվ եր շըն-
չում։ Կոկորդում ինչ վոր բան եր դիմ տոել։

Նա վճռական քայլերով առաջ զնաց, անցորդնե-
րից հարցնելով ձանապարհը։ Այդ յերկար ձանապարհը
տանում եր մինչև քաղաքի վերջը։ Տներն ավելի ու ա-
վելի քիչ եյին պատահում։ Վերջապես յերեաց մի բարձր
ցանկապատ, վորը ըթապատում եր կարմրագույն քարե-
յերկաթավուն մի արկղ։ Դա վանքն եր։

Վանդան զանգահարեց։ Նա լսում եր, թէ ինչպես
բարախում և իր սիրոր։ Թէթի սահելով, մոտեցավ մի
մեծ սղիստու թուշուն՝ կույսը թեվափոր թաշկինակը

գլխին։ Փափուկ, անտարբեր մի դեմք՝ բաց յերկնա-
գույն աչքերով։ Լայն միջնադարյան հագուստի գոտու
մեջ խրած է հաստ գարշնագույն համբիւլը։

Վանդան հարցրեց, թէ կարո՞ղ ե ահսնել կառա-
վարչուհուն։

— Կառավարչուհին յեկեղեցումն է։ Մինչև ժամա-
սացությունը վերջանա, գեռ մի ժամից ավելի կա։

Կույսը զարմացական և կտամբական հայցք նե-
տեց Վանդայի վրա։ Ինչո՞ւ նա յեկեղեցի չի զնացել։

Վանդան ինդընց թույլ տալ ներս մտնելու։ Նա
սպասելու յէ կառավարչուհուն։ Կույսը վասահելով
սպասելու յէ կառավարչուհուն։ Կույսը վասահելով

բացեց գուռը և նրան ներս թողեց անձուկ լնդունա-
րացեց գուռը և նրան ներս թողեց անձուկ լնդունա-
րանը։ Համբիւլ գցելով, կույսն աղոթք եր մըմըն-
րանը։ Համբիւլ գցելով, կույսն աղոթք եր մըմըն-

րանը։ Համբանակ զբոցում այցելողների հետ։ Ժա-
մանակ առ ժամանակ նա զիմում եր Վանդային և ըգ-
գուշությամբ հարց ու փորձ անում։ Վանդան կարձ

գուշությամբ պատճեն տալիս։ «Ակելի քիչ պատճեն և ավելի
զատ տեղեկանալ», մտածում եր նա։

— Այստեղ վանքում յերեխաներ կա՞ն, — հարցրեց
Վանդան։

— Այս, իհարկե կան, — սառնաստիրտ պատասխա-
նեց կույսը, բայց նկատելով Վանդայի հուզմունքը, նա
պիսի ընկավ և ամեն կերպ հասում բանելով աշխատեց
փոխել ասածի իմաստը

Անցավ մի ժամ, և Վանդան հարեան նախասենյա-
կեց լսեց բազմաթիվ վառնածայներ։ Երան թվաց, թէ
ինքը կճանաչի յերեխաների քայլվածքից, գրա համար
ինքը կճանաչի յերեխաների քայլվածքից, գրա համար
նա արտղ մոտեցավ զռան։ Վանդան արդեն բանել եր
զռան կոթից, բայց զռան պատճեն չին չըեց նրան և խօսու
ձայնով տուց։

— Յեթե զուք հանգիստ չեք կարսղանում սպասել,
այն ժամանակ ուրիշ անդամ յեկեք։ Յես կիմանամ թե
կառավարչուհին ընդունում ե այսոր, թե զոչ։

Դոնապանուհին հեռացավ և վերադարձավ կես
ժամ հետո։ Այսոր կառավարչուհին ընդունելություն
չունի։ Տոն որերին նա չի կարող զբաղվել աշխարհա-
կան գործերով։ Վանդան պետք ե զա մի ուրիշ անդամ,
նախապես նամակ գրելով այդ մասին։

Վանդան առարկեց, թե ազատ ե միայն տոն որի-
րին, վարովհետեւ լի որերին աշխատում ե գործարանում
չի հեռանա, մինչև վոր պատասխան չստանա—մի՞թէ
նրան ուժով կհեռացնեն այստեղից։

Դոնապանուհին խոսացավ վորձել կանչելու հեր-
թափահ քրոջը և, լսու յերեւոյթին, դժգոհ տրամա-
դրությամբ և անվճռական դիմեց գետի զուոր։ Վան-
դան խիստ վրզովված եր։ Նա հասկանում եր, վոր ուղ-
րակի ցանկանում են աղատվել իրանից։ Յերեխաներն
լսու յերեւոյթին, այստեղ ելին։ Յեթե այժմ նա հե-
ռանա, ո՛վ զիտե, թե ուր կիրագցնեն նրան։ Նա վոչ մի
սայմանով տեղից չի շարժվի։

Վանդան անաղմուկ բացում ե գուռը, նայում ե
չորս կողմ և մատների վրա անհկատելի ներս սողում
ընդունաբանից։ Յերկար, մասյլ միջոնցք։ Երա աչքե-
րը պետք ե վարժվեն մթության։ Ահա հետեւ կողքի
դռնից զուրս սահեց մի փորբիկ կերպարանք առանց
թաշկինակի, մուգ հագուստով։ Վանդան համում ե
նրա յետեցի։ Ինչ վոր գոներ կրնկի վրա բացլում են։
Դոնապանուհին ե հերթապահ քույլը կորում են Վան-
դայի ձանապարհը։ Նա ցանկանում ե հրել նրանց,
բայց դրանց միանում ե մի յերրորդ կույս։ Երանց թե-

վագոր թաշկինակների հետեւ վոչինչ չի յերեսում։
Յերեք զույգ ամուր ձեռքեր չետ են քաշում նրան։
— Թողեք ինձ, յես ուղում եմ տեսնել իմ յերե-
խաներին։

— Խոկ զուք թույլտվություն ունե՞ք տեսակցելու։
Վանդան լսում ե ուշադրությամբ։ Թույլատվու-
թյուն... տեսակցություն... նրա յերեխաներն այս-
տեղ են։ Վանդան ծունկ է չոքում, կախվում ե հերթա-
պահ քրոջ կապույտ շրջապղեսատից և գոչում։
— Թողեք ինձ յերեխաներիս մոտ։ Յես պետք ե
տեսնեմ իմ յերեխաներին։

Կույսերը քջքում են, ինչպես հուզված հալեր։
Վանդան չի լսում նրանց խոսակցությունը։ Նա պառկած
է հատակի վրա՝ ձեռքերով կառչել և կույսի փեշերին,
և չարունակում ե ճշալ։

— Յես ուզում եմ տեսնել իմ յերեխաներին։
— Վեր կացեք, — հանկարծ նա լսում ե հերթապահ։
— Վեր կացեք, — հանկարծ նա լսում ե հերթապահ։
կացեք։

Վանդան կամաց, առանց վաստակու վատքի յե-
կանդնում։ Հերթապահ քույլը անհայտանում է։ Յեր-
եկու ուրիշ կույսեր վանդալին տանում են մի ուրիշ
և սենյակ։ Մերկ պատեր են։ Անկյունում կանգնած ե
տատվածամոր մարդահասակ փայտե արձանը։

— Աղոթեցեք, այդ ձեզ կհանգստացնի, — ասում ե
զոնապանուհի քույլը և յետ զանում։
Վանդան կանգնած ե սենյակի մեջտեղում և նայում
է փայտե վանդակին։ Նայում ե լարված քունքերում
և փայտե վանդակին, և նրան սկսում ե թվալ, թե ասո-
ցավ զգալու չափ, և նրան սկսում ե թվալ, թե

վածամոր քիչ սղիկ աչքերը կենդանանում են և ձեռքերը, վորով բռնել և հաղուսաը, շարժվում են:

Վանդայի ուղեղում արթնանում են հիշողություններ... Հին կիսախալար մի յեկեղեցի ուրբերի տւսափրված կերպարանքով... Առաջ նա ինչ սիրով եր գնում այնտեղ: Յերզեհոն, յերզեցողություն, խոնկ... Մենակության դպացումը չքացավ: Ոմեն ինչ այնքան խաղաղ և հանդիսավոր, և վերջապես, այնքան հաճելի յէ վերստին մանել արեսու աշխարհը: Առաջին առակում, յերբ ազիկ եր և ամառանության ակեղեցում: Հետո, յերբ վրա հասան ծանր ժամանակ-ները, նա սկսեց ապելի ու ապելի քիչ զնուլ: Առօրն աղոթել: Միենուին և, յես ինքու եմ կովում բոլոր արհավիրքների գեմ:

Թերես նա սիսալվում եր: Գուցե հավատն, այնուամենայնիվ, նրան կողնի այժմ: Վանդան մի քայլ մոռանում և սատվածամոր արձանին, ծանկ և չոքում, ձեռները խաչում և սկսում աղոթել: Զերմ և բառն աղոթքներ և ուղարկում նա փայտե քանդակին:

— Մայր սաստվածածին, վերադարձրու զավակներիս: Սուրբ մայր սաստվածածին, խղճա ինձ: Դու զուն ինել: Սուրբ մայր սաստվածածին, ամեն կերակի յեղեցի կղնամ. վերադարձրու զավակներիս: Սուրբ մայր սաստվածածին, յիս զգնում եմ իմ բոլոր մեղքերը: Ճին, յիս ծնկաչոք կոստոմ մինչեւ քո սուրբ սեղանը,

Յեզ ահա... Վանդան նիրհում և ջերմհոսնդ ա-

դոթքներից: Նրան թվում և, թե վայտի դարձնադույն գլուխը համաձայնության նշան արավ:

Միջանցքում լովում և վոսնաձայնը: Վանդան համ-րուցում և արձանի վոսները: Ապա նա վոտքի յև կանգ-նում, աչքերը սեղեւելով գոանը, այնուեղ կանգնած են, իր յերեխաները՝ Աննան և Կատյան, վորոնք գունատ են, լուրջ դեմքով, մուգ կապույտ, ամուր կոճկած հա-րարդ գույքով, մուգ կապույտ, ամուր կոճկած հա-րարդ գույքով մեջ: Բայց ահա Կատյան վազում և դեպի մայրը և գողցովուն ձեռներով գրկամ են նրան:

— Մամա, մեզ տար քեզ հետ:

Աննան կանգնած ելուու, թոթուացող շրթունքներով: Վանդան զարդուում և վորբին և փոքրում և մի բան պահեց գուրզուում և վորբին և փոքրում և մի բան պահեց: Դանից լովում և կեղծ նրբությամբ արտասան-ամել: Վանից լովում և կեղծ նրբությամբ վորդ մի ձայն:

— Ինչո՞ւ յիս ուղում հեռանալ մեզանից, Կատ-

յա: Մի՞թե այսուեղ վատ է: Աղջիկը յերկուուղած նայում և հերթական քըոջը և կարկանելով ասում:

— Զե... այսուեղ վատ չե... բայց յիս ուղում եմ զնալ առնե, մայրիկիս մոտ:

— Այսուեղ նրանք վոչ հոգեվոր և վոչ եւ ժարմնավոր անդի պալասություն չեն զգում, շարունակում և կրոնի քույրը: Երանց կերակրում և զաստիարակում են կրոնի վողով:

— Այդ շատ բավ է, քույր, վոր զուք կերակրում եր իմ զամակներին, մեղմ արտասանում և վանդոն:

— Բայց այժմ այլեւս կարիք չկա: Յես ինքս հնարավություն ունեմ կերակրելու իմ զամակներին և միշտ եւ ինչն այժմ նրանց կերակրել եմ իմ ձեռքերի աշխատան-գունչ այժմ նրանց կերակրել են և լեռեկ այսուեղ: Յես չպիտիմ, ծուկ համարակել են և լեռեկ այսուեղ:

թե այդ ով է արել և ինչու: Այժմ յես նրանց առևն կտանեմ և կդաստիարակեմ աստծու ոգնությամբ:

— Զեր խոսքերը ցույց են տալիս, վոր դուք բարեպաշտ եք, տիկին վիշնեվսկայա, ասում և կույսը, բայց ձեր հոգին դեռեվս ամբողջովին հնազանդ չե:

— Այն ժամանակ հենց իրենց՝ յերեխաներին հարցնեք, — բացականչում և վանդան: — Դուք ուզում եք մնալ այստեղ, թե՞ վերադառնալ ինձ մոտ:

— Վերադառնալ, — կամաց և վախճանալով պատասխանում են աղջիկները:

— Ուրեմն յերեխաների իրերը բերեք, սիրելի քույր, — ասում ե վանդան, վոր՝ գեռուս չե կորցրել աստվածային հովանավորության անմեղ հույսը:

— Դոնապանուհի, ավել այն զրությունը, վոր ստացված և անչափահաներին խնամող կոմիտեյից: Կույսը զրպանից մի թուղթ և հանում և տալիս վանդային: Նրա մեջ զրված ե.

«Այսինչ թվին ծնված Աննա Վիշնեվսկայայի և այսինչ թվին ծնված Յեկատերինա Վիշնեվսկայի դաստիարակության իրավունքը հանձնվում ե ս. Վինցենտի վանքին կից մանկատանը՝ Դյուսելդորֆում»:

Ստորագրություն՝ «Անչափահաներին խնամող կոմիտե»:

Յեկ այդ ամենը հաստատված և մեծ պաշտօնական կնիքով:

Վանդան յերկու անգամ կարդում ե այդ թուղթը և սկսում է հասկանալ, թե այդ ինչ և նշանակում: Նրա մեջ բռնկում ե մի կատաղի զայրույթ: Նրա մեջ ցանկություն և առաջանում վեր կենալ և ջարդ ու վշուր անել ամրող սենյակը: Ապա նրա հայտցքն ընկնում է

փայտի աստվածամոր վրա, վորը զեռնս ժպտում և լուսավորված արեվի ճառագայթներով: Վանդան մտածում ե: «Նա ուժեղ է, այս սրբի հզորության գեմ յես ուժ չունեմ պայքարելու: Բայց չե՝, վոր նա խոստացավ ողնել ինձ: Աստվածամայրը չե խարի»: Այդ պատճառով վանդան հանգստացած առում ե.

— Զե վոր յես չեմ գիմել վոչ խնամակալական ընկերության, վոչ անչափահաներին խնամող կոմիտեյին: Յես բացարձակապես կարիք չունեմ նրանց ոգնության: Յերեխաներ զնանք:

Վանդան բռնում ե յերեխաների ձեռքից: Աղջկների աչքերը հրձվանքից այրվում են: Տես, ինչ ուժեղ ե նրանց մասնակիությունը:

Հերթապահ քույրը սղմում ե զանդի կոճակը: Նույն ակնթարթում ներս և մտնում պահակը վեց կույսերի ուղեկցությամբ, վորոնք շարժվում են մարտական կարգով:

— Տիկին Վիշնեվսկայան յերեխաներին գրգռում և խառնակչություն անելու յել, հակառակ գոյություն ունեցող որենքների, փորձում ե նրանց տանել այդ տեղից: Հեռացրեք:

Վանդան այլևս չե կարողանում զսպել իրեն: Նրան թվում է, թե տունը քանդվում ե և նրան թագում իր փլատակներով: Նա անոգնական պատկած է նրանց տակ:

— Զե՞ վոր յես վսչինչ չեմ անում... Յես յերեխաներին կթողնեմ այստեղ... Յես միայն ուզում եմ իմանալ... Յես չեմ ուզում խախտել որենքները...

Յերեխաները սկսում են լաց լինել: Նրանք դերված են: Նույնիսկ մայրն անզոր է նրանց ողնելու:

— Յեթե գուք բռնի գործողությունների չեք զե-

մելու, այն դեպքում մի ամիս հետո կարող էք նորից այցել յերեխաներին, —ասում ե հերթապահ քույրը:

Վանդան հրաժեշտ է տալիս յերեխաներին և հեռանում:

Յերեխաներին տեսնելուց հետո Վանդայի սրտում մի ինչ վոր բան փշրվեց: Նրա նախկին յեռանդը չքացավ: Նա գործարան և զնում և տանն աշխատում և, ինչպես ավտոմատ մեքենա: Նա այլեվս չի ծիծաղում և ծերացած ու հագնած տեսք ունի: Հարցերին կարձ պատասխան և տալիս: Իսկ ինչո՞ւ այդպես չլինի: Վոչ վոք չի կարող նրան ոգնել և վոչ վոքի վրա չի կարելի հույս զնել: Յեթե նույնիսկ ինքը աստվածամայրը... Աստվածածնի կերպարանքը նաեմանում է: Վանդան համարյա դադարում և հավատաբուց, բայց այնուամենանիվ, հույսի մի ինչ վոր աղոտ լույս դեռ ջերմացնում և նրան:

Մի ամիս հետո նա դարձյալ այցելում և յերեխաներին: Նրանք ավելի յեն գունատվել և ազգվել յեկեղեցուց: Նրանց և մոր միջեղ աճել և մի անջրաբու: Նրանց թույլ չեն տալիս մենակ խոսելու իրար հետ: Տեսակցության ժամանակ ներկա յել լինում կույսը, վոր հետեւմ և նրանց: Վանդան չի կարողանում իմանալ, թի ինչպես են ապրում նրանք և ինչ են մտածում:

Նա հետանում և կատարելապես ջարդված:

Նրա հայցաքն ընկնում և աստվածամոր փայտեարձանի վրա: Նա ցնցվում է: Նրան թվում և, թե ըստիկ աստվածամայրը տչքով և անում իրեն և ծաղրում:

Վանդան կանգնած և դադարյահի առաջ: Ուզի մեջ պարում են բամբակի քուլաները: Դուան առաջ յերեվում
34

և քրոջ տղան՝ Եմիլը ճախարակների սայլակով: «Նա հետզհետե փոքրանում է, —մտածում ե Վանդան, —և ավելի շատ և հազում: Բանվորի յերեխային ո՞վ և հետեւողը—վոչ մարդ կա, վոչ աստված:

Եմիլը մոտենում է:

— Յերբ վոր դու մեկ ել Դյուսսելդորֆ զնաս, ինձ ել տար հետդ: Ցես նրանց գուրս կառկեմ այնտեղից: Հո նրանց չի՞նք թողնելու բանաբրկված:

Վանդան անհուսալի որորում և ձեռքը, բայց միաժամանակ մտածում է: «Համենայն դեպս պետք և մի բան անել»:

Տնակների մոտ նա հանդիպում և Յուլիուս: Նա դարձյալ հարրած է: Աչքը սահեցնելով Վանդայի վրացից, նա քրթմնջում է.

— Խոլերան տանի դրանց:

— Ցես ինչոք անեմ, Ցուպպ:

— Ուժով խլիր յերեխաներին և հետո հեռացիր նըրանդ հետ:

— Բայց այդ անկարելի յի, Ցուպպ: Պետք և մի ուրիշ բան մտածել:

Ցուպպը մտածմունքի մեջ և բնկնում, նայում և յերկնիքին և ծոծրակը քորում: Հետո նրա ուսերը վերմեր ին թշում անձայն ու զուտպ ծիծաղից:

— Գանգատ տիեք, Հոհուում և նա բարձրամայն, գանդատ տիեք:

— Ցես ո՞ւ մը գանգատվիմ:

— Դիմեք իշխանությանը, այո, այո, իշխանությանը:

— Ցուպպը կրկին գալարվում և ծիծաղից: Գնացեք քաղաքային խորհրդականի մոտ... Ցեվ Ցուպպն անհայտանում է:

Վանդան յերկու ամիս պատեպատ ընկավ, մինչեղ
վոր վերջաղաղես կարողացավ տեսնել քաղաքային խոր-
հրդական սոցիալ-դեմոկրատ Վյուրլեմանին: Ընկեր-
ները նրան ասացին, թե Կենտրոնի կուսակցության
ներկայացուցչի մոտ գնալը միտք չունի—չունը շան
թաթը չի ծամի: Իսկ սոցիալ-դեմոկրատը ժողովրդից
և ընտրված:

Քաղաքային խորհրդական Վյուրլեմանը զննող հա-
յոցքով, անվատահ նայեց Վանդային, մորուքը շոյեց
և առաց.

— Մենք քննություն կկատարենք, սիրելիս: Ուրեմն
ու Վինցենտի վանքում՝ Դյուսելդորֆում:

Վանդան աղաչեց նրան ժամանակ չկորցնել: Նոր
հույսեր առաջ՝ նա վերապարձավ իր տնակը

Թիշերը նա տարրինակ յերազ տեսավ: Նա կանդ-
ուած եր իրենց հայրենի գյուղի շուկայի հրապարակում: Յեկավ մի թափառական յերաժիշտ և սկսեց նվազել
իր շարժանկան: Նրա ստիլի մեջ յերկու մանրիկ կեր-
պարանքներ սկսեցին պարել: Մեծ զարմանքով Վանդան
ձանաչեց զրանց, մեկը վանքի դարչնազույն ասովա-
ծամայրն եր, մյուսը՝ քաղաքային խորհրդական Վյուր-
լեմանը: Խորհրդականը տարրինակ ձևով ցատկում եր,
դյուսիր յետ ու տառաջ եր տանում, խոնարհվում եր և
ջանասեր կալվարի դեր կատարում: Փայտեղեն սուր-
բր պարում եր իր արժանապատվության գիտակու-
թյամբ, առանց ավելիորդ շարժումների, բայց նրա
ծառատիկ աչքերը չարաճնորեն թարթվում եւ կիոցվում
ելին՝ կարծես գրգռելով իր յերկրպագուներին:

Անցավ մի քանի շաբաթ: Ամեն ինչ մնաց նույն
դրության մեջ: Վանդան խորհրդական Վյուրլեմանին

նեղը գցեց՝ բազմիցս խնդրելով արագացնել գործը և
արդեն յերեք անդամ այցելել եր աղջկեներին:

Արդեն չորրորդ տեսակցության որն եր: Վանդան
սովորական ճանապարհով զնում եր դեպի վանք: Ճա-
նապարհածախոր նա իր խղճուկ աշխատավարձից գո-
ղանում եր քաղցած մնալով: Յերբ Վանդան զանգա-
հարեց դոնից, սպիտակ թաշկինակալորը սովորականից
զանդակ մոռեցավ դուն: Առանց դուռը բացելու, նա
ասաց.

— Տում վերադարձեք սիրելիս: Յերեխաներն այ-
ս այստեղ չեն:

Վանդան այնպես վախեցավ, կարծես մեռնում եր:
Պատահեց այն, ինչեց նա վաղուց ծածուկ վախենում
եր: Մի ակնթարթ նա կանգնած մնաց, ինչպես կաթ-
վածահար: Հետո նա սկսեց թափահարել յերկաթե
վանդակը, պահանջելով, վոր իրեն ներս թողնեն: Թաշ-
կինակալոր կույսը, վոր արդեն վերադառնում եր տան
փրկարար սովերի տակ, գանգաղ յետ նայեց: Վանդան
թափահարում եր վանդակը և ճչում, թէ ուզում ե տես-
նել յերեխաներին: Վանքի առաջ կուտակիցնից անցորդ-
ները: Այն ժամանակ պատուհանից մեկը նշան արեց,
և կույսը, հոգոց հանելով բացեց դուռը և Վանդային
ներս բնդունեց:

Ընդունարանում նրան սպասում եր կառավարչու-
հին: Դա մի աչքի ընկնող կին եր անշարժ դեմքով, վոր
կարծես շինված եր սպիտակ փայլուն մարմարից: Զօա-
մայական, առարկությունն չհանդուրժող ձայնով նա
ասաց.

— Սիրելիս, ձեր պատճառով աղջկեներն առաջին
ըրջանում դժվար ելին մնում այստեղ: Այդ պատճա-
ռով մենք նրանց մի ուրիշ տեղ ուղարկեցինք: Յեն-

թարկվեցեք ձեր բախտին : Մեր տեր Հիսուս Քրիստոսը ամեն ինչ դեպի լավն է առնում : Նա պիտի լինի այդ աղջիկների հայրը, վորոնք զբկվել են հորից : Հետագայում նա ձեզ մոտ կրերի աղջիկներին՝ արդեն մեղքերից ափառված և պատրաստ նրան ծառայելու : Ամեն առավոտ յերեք անդամ կարգացեք Առ Յարի¹⁾, սիրելիս մեր աշխատամբների հաջորդոթյան համար, և դուք կմիանաք ձեր դավակների հետ, յերբ ժամանակը լրան :

Այս խոսքերով կառավարչունին իր հետ գուրս բերեց շշմած Վանդային և հասցրեց մինչեւ դուռը :

Վանդան՝ կատարելապես ջարզված, յետ զարձավ գեղի տուն : Յերբ նա, կառամատուցի վրա կանդնած, տեսավ մոտեցող չողեկառքը, մի վարկյան ուղեց նետվել զնացքի տակ, բայց յերեխաների հանդեպ իր պատասխանավության գիտակցոթյանը նրան յետ պահեց ինքնառպանությունից :

* * *

Երա սենյակում խոհանոցային սեղանի վրա զըստված և մի նամակ : Քաղաքային խորհրդական Վյուրլիմանը հայտնում է, վոր տեղեկացել և Դյուսելլեթոփի ո . Վինցենտի վանքին կից գոնվող մանկատան մասսին : Այլ մի որինակելի դաստիարակչական հաստատություն է, վորի զործունեցության մեջ վոչ մի թերություն, չի կարելի նկատել : Յուրաքանչյուր մայր, վորի յերեխան զանգում և անողի, կարող և բացարձակեալ միամբ լինել :

Վանդան մի ակնթարթ փակում և աշքերը, և նրա առաջ պատկերանում և յերազում տեսած տիկինների

կույզը շարժանկայի վրա պարելիս : Նամակը նրա ձեռքից սահում է ցած...

Նա մարում և ճրագը, ընկում և մահճակալի վրա և անմիջապես քնում : Գիշերը նա արթնանում է իր բարձր աղմուկից . սենյակի հատակը խօրսակվել է ... բացված և սի հսկայական փոս . . . յերեխաներն ընկնում են նրա մեջ և անհայտանում : Վանդան ցատկում և մահճակալից, նեավում և հատակի վրա և զլուխը հարցածում նրան :

Հաջորդ առավոտ բռնյը նրան գանում և հատակի վրա պառկած, տարատիրան մեջ : Դրացիներն այցելում են հիմնադ Վանդային : Գալիս ենակ սեկ Ցուլպին իր կնոջ հետ միասին : Նու կարգում և քաղաքային խորհրդական վրարեմանի նամակը և չարախնդաց ժպառմ :

— Ահա, թե ինչ կնշանակի զանդատ տալ : Այժմ զուր համազեցիք : Ճիշտ այնպիսի մի պատմություն, ինչպես և իմ փշացած թոքերի մասին զանդառը : Իշխանությունն էլ, տերությունն էլ, — դրանք բարոր մի ուժագակամուրի ոնդամներ են, վորոնք պաշտպանում են միմյանց : Գյուրիզ բարձր, վատահ յեղիք, վիշենուկայաց : Երանց չի հաջողի ծծել յերկուամբը արյունը : Մէնք մեր ուզածը կանենք : Յևս մարդ ունեմ Դյուսելլեթորփում : Յետ չոտուի կիմանամ, թե ուր են յերեխաները :

Մի քանի որ հետո Վանդան գնում և զործարան : Եորից յեղել եք անշափահասներին խնամազ կոմիտեյում : Բայց այնահետ այնպես են ձևացնում, թե իրեն չպիտին յերեխաների տեղը : Ասորիթ կինը անհյուրնկալ տանով խոստանում և տեղեկանքներ վերցնել, բայց Վանդային նախադգուշացնում և քիչ զբաղել կլյանգով — ոյլ միայն մատթարացնում և զործը :

¹⁾ «Մարիամի զովքը» - կաթոլիկական աղոթք:

Մի որ յիշեկոյան տնակների մոտ Վանդան հանդպաւմ և Յուպովին: Աեվ, հասու մաղերով շրջապատշած նրա բերանը ժպիտ և արտահայտում:

— Իմացա, —բացականչում են նա: —Նրանք Մողելի մանկատան են, սեվ ազուալների մոտ:

Նա հայտնում է Հասցեն:

Վանդան գնում է կայաբան տեղեկանալու գնացքների միկնելու ժամանակի և տոմսի գնի մասին: Այստեղ և յետ արժե քառասուն մարկ, բայց նա մի տեղ պետք և ազրի և, բայցի դրանից, մի յերկու գրոշ ել հետք պետք և ունենալ: Վորտեղից գող վերցնել: Նա դիտում է իր աղքատիկ տնտեսությունը, իմանալու, թե նրանից ի՞նչ կհաջողի ծախել: Փետրավոր վերմակը և բարձը... Նրանք քիչ գող չեն նստել, վորոնք իրենց հերթին ձեռք են բերվել ծանր աշխատանքով, բայց մի քանի գրոշ կտան դրանց: Ել վոչինչ չկա ծախելու:

Յուպով շվջում է թաղամասը և զնորդներ վորում: Հաջորդ որը հետաքրքրված զնորդները լցվում են խոհանոցը: Մի քանի ժամ հետո անկողինը վաճառվում է: Վանդան դառնությամբ նայում է իր ձեռքի արծաթ դրամներին: Փողը չի բափականացնում: Հիմա ի՞նչ անել: Պահարանը: Նրա խղճուկ ցնցոտիներն առանց դրա յել յուլա կդնան: Նա վաճառում է շորերի պահարանը: Այժմ բավտկանաչափ փող կա:

Դործարանում նրան մի քանի որ արձակուրդ են տալիս իր հաշվին: Վանդան կանգնած և Դյուստելլորդի կայարանում: Մոտենում է ձեւպնիթաց գնացքը: Յերկրորդ կարգի զահլիթից գուրս են գալիս չքեղ հագնված տղամարդիկ, կանայք և բարձր դասի չորս կաթուիկ քահանա: Վանդան տեսնում է, թե ինչպես նը-

րանք նստում են գնացք և հարմար տեղավորվում համարյա դատարկ կուպեների լիափուկ բարձերի վրա: Նրա զլիսում մի միտք և ծագում: Այդ ինչո՞ւ վոմանք այսպես լավ են ապրում, իսկ մյուսները վոչինչ չունեն, բացի զրկանքներից և տանջանքից:

Վանդան սպասում է ևս կես ժամ: Մոտենում է մարդատար գնացքը: Նա տեղավորվում է կողմաներով և հակերով լցված կուպեյի մի անկյունում և գնում հանգամակը Հոմենոսի ափով դեպի վեր:

* * *

Աննային և կատյային տեղավորեցին Մողելի և Մարիայի վանքին կրց աղիկների մանկատանը: Վանդանը գտնվում է քաղաքից դուրս, կայարանից մեկ ժամքը գտնապահ հեռու: Յերկու հարյուր անշափահաս տասնից մինչեւ քառան տարեկան տղաներ և աղիկներ ապրում են վանքի հասղարյան շենքում՝ կույսերի և նըրանց ողնական յերեխաների հսկողության տակ: Մերկ սպիտակ ունեցող հսկայական ննջարաններում յերկաթե նեղ մոխրագույն մահճակալների վրա քնում են քանանց յերեխուն հոգի: Ողը ծանր և հեղձուցիչ, չնայած բաց լուսամուտներին: Աննան քնում և մի աղիկաթի վորը հաճախ տնքում և բաց և լինում քնի չկա կողքի, վորը հաճախ տնքում և բաց և լինում քնի շկա կողքի: Մերկ ուրիշը հանկարծ ճկում է: Յերեխանները վախացած վեր են թռչում, նորից պառկում են, յերկար խեցած վեր են թռչում, նորից պառկում են, մինչև վոր քնում շուրջ են գալիս մի կողմից մյուսը, մինչև վոր քնում են:

Առավոտյան ժամի հինգ և կեսն է: Զանդի բարձր ու սուր ձայնը ձեղքում է ննջարանի ծանր ողը: Մի քանիսը մեկն ցատկում են մահճակալները համառ պայքարում են հոգնության դեմ, վորը նրանց

կրկին յետ և պլուտմ բարձերի վրա : Վասները քըսատ-
քստացնելով ներս և մահում կույսը և քնածների վրա-
տից պոկում վերժակները : Փոքր թխամազ աղջիկը,
հենց նա, վորը մշամակն լաց և լինում քնի մեջ, բո-
րբովին անկոր և աչքիրը բացելու : Կույսը փրփրաբե-
րան դուռը է . «Ճռով, ամեն անդամ կրկնում ես միե-
նում սրամությունը», և մաղերից քաշելով աղջկան
վերկացնում անկողնից :

Ամեն մեկը ձգում և առաջնը հասնել լվացարա-
նի ծորակներին : Յեթե յերկորդ կամ յերրորդ չեր-
թին բնկնես, այն գեղքում կարող ես ուշանալ յեկեղե-
ցուց և պատճիւլ : Սահերս են, վոր թռչում են բաց,
շագանակագույն և սեփ պլուիներից, իրենց հետ պո-
կելով մաղերի ամբողջ փնջեր : Հարթ, կարծու լիզված
մաղերը հյուսվում են : Ապա՝ յետ գեղի ննջարան : Այ-
նուհետեւ տաք սավանները ինամքով արթուկիւում են և
վերժակներով ծածկվում են մահակալները : Կրկին
զանգի ձայնը՝ կանչում են վաղ պատարագի : Հոգնած,
չարդված մարմնով և զատարկ ստամոքսի ցալադին
զալարումներով աղջիկները կույզ առ կույզ անցնում
են վանքի կիսամութ միջանցքով, ուր յերեք արել չի
բնկնում :

Աչա նրանք հասել են աղոթառուն : Յերեխանները
վախենում են յեկեղեցու քարերի սատարկ ցրտից, վորը
թափանցում և նրանց վախտ, նիշար մարմինը : Երանք
ծունկ են չորում : Կարծես թե մի չար վոգի նստել և
քարերի տակ և ստեղնում և նրանց : Աշխարհը ստոն
և չար : Ամբողջ շրջապատը նրանց թշնամի յե թվում :

Աննան աչքերը զարձնում և դեպի քարեարերը,
վորոնք նկարված են միջապատերի դուրս ցցված մա-
սկի վրա : Նա ուզում և տեսնել սուրբ Աննային . չի

վոր նա նրա պաշտպանն է, ՀովանավՈրովը : Աչա նա
կանգնած և վոսկե հագուստներով սեղանից բարձր :
Ինչպես խաղողի բույսը, նա խօնաբաշվել և Մարիամի և
Հիսուսի վրա : Ինչ պայծառ և վարդապույն դեմքեր ու-
նեն : Կարծես թե ամեն որ նրանք ուտում են կաթենով
և մեղքը : Բայց չի վոր նրանք միայն նկարված են : Իսկ
ուուրբ Աննան բալորովին չի յի նայում իր վրա : Տհո-
նուս յերբելից են մտածում և նրա մասին : Այն ժա-
մանակ սուրբը կիմանար, վոր նրան այստեղ պահում
են բանտարկված :

Սուրբ Աննայի մասին մտքերը ծակում են նրա ու-
ղեղն այնպիս, ինչպես քաղցը ծակում և ստամոքսը : Նա
գալիս ե այն յեղակացության, վոր կամ սուրբ Աննան
գալիս ե, չամածայնության և յե-
մի չար կնիվարմատ և, վորը համածայնության և յե-
կել կույսերի հետ, վոր յերեխաններին խեն իրենց ծը-
կել կույսերի մի այլ գալու աշխատելու կամ ընդ-
ուղներից և հարկադրեն նրանց աշխատելու կամ ըն-
հանրապես չկա վորեն սուրբ Աննա, այլ միայն հնա-
րեկ են կույսերը : Յեթե այլպիսի մի սուրբ գոյու-
րել են կույսերը : Յեթե այլպիսի մի սուրբ գոյու-
